

ᐱ ᕐ ᑦ ᑦ ᕐ ᕐ ᕐ ᕐ


Դարերը առաջ վանքի մը մէջ ապրեցայ ես .
Ու դաւիթահար խոունկէ ձեռքերս աղօթեցին
Ուր աչքերուս վըրան իջնէր ցօղը լոյսին .
Ոսկին անոր տեղար հոգւոյս մէջ դադտնապէս :

Սեւեռեցայ մառախլապատ գիշերներով
Հայրենավառ արդարութեան արեւակին,
Ըզգալով միշտ որ շունչիս տակ պիտի ծաղկին
Քարերը սուրբ գիս յաւիտեան բանտարկելով:

Ասոր համար ծարաւ մը կայ չըյադեցած
Աշխարհամերժ առանձնուլթեան մը, որուն դեռ
Կ'անցնին օրերրս խորհուրդովր ծանրաբեռ,

Ու կը թըլի թէ տակաւին այսօր իսկ թաց
Են իմ աչքերըս հեռաւոր լոյսին ցօղէն ,
Ու վանքին ալ խոռնկերը միտ հոգիս կ'այրեն... :

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ



(Շար. տե՛ս «Բազմավեպ» 1945, էջ 5)

ԳԼՈՒԽ Բ.

ՎԵՆԵՏԻԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՁԵԻԵՐԸ

Սկզբնաւորութիւն տոժական պատիւին եւ անոր իրաւունքները: — Տոժական իշխանութեան դէմ շարժումներ: — Բարձումը եւ կրկին հաստատութիւնը: — Լոնգորարտացիներու արշաւանքը եւ կրած պարտութիւնը Փրանկներու միջ-
նորդութեամբ: — Ժողովրդական երկու կուսակցութիւններ վենետիկեան նորա-
կազմ Հասարակապետութեան մէջ: — վենետիկցիներու առաջին յաղթանակը
Փրանկներու վրայ: — Անկեղծ փառքէիփացիոյ տոժին կատարած վերանորոգ-
չական մեծ գերը: — Ս. Մարկոսի մարմնոյն փոխադրութեան պատմութիւնը: —
Տոժական պատիւի եւ Ս. Մարկոսի տաճարին կառուցումը: — վենետիկեան
հարստութիւնը՝ արդիւնք իր առեւտրին: — Հունգարներու արշաւանքը
վենետիկի վրայ եւ չարաչար պարտութիւնը: — վենետիկ՝ Պետրոս Բ.
Որսէլոյի օրով:

Վենետիկեան լճակներուն բնակիչները՝ ի սկզբան կախում ունէին
Իւրաքանչիւրը իրենց ծննդավայր քաղաքներէն, ուսկից եկեր դադ-
թեր էին, եւ ուր կը յուսային նորէն դառնալ, երբ բարբարոսաց ար-
շաւանքները դադրէին, ինչպէս ըրին ոմանք։ Սակայն այդ յոյսը
բոլորովին ի գերեւ ելաւ, երբ Լոնդոնաւրտացիք եկան վերջնականա-
պէս քանդեցին Յամաֆային Վենետիկոյ բոլոր մայր քաղաքները, եւ
խզուեցաւ ի սպառ այն կապը՝ որ կը միացնէր տափաւին կղզիները,
խաղթականները ցամաքի քաղաքներուն հետ. որով ստիպուեցան ի-
գաղթականները ցամաքի քաղաքներուն հետ. որով ստիպուեցան ի-
րենց յատուկ վարչաձեւ մը ստեղծել, նախ քիտաշխներ, ինչպէս ը-
րին Փատուացիք առաջին անգամ Ռիալտոյի կղզիին վրայ, եւ յետոյ
ըին Փատուացիք առաջին անգամ Ռիալտոյի կղզիին վրայ, եւ յետոյ
ծովային տրիբուններ ընտրել իրենց ժողովներով, իբր 466ի ժամա-
նակները, եւ այս կերպով յիշեալ կղզիները տեսակ մը ընկերակ-
ցութիւն կազմեցին, որ վենետիկեան իմֆինիշխանութեան նախագիւր-

ճր եղաւ։

ձը եղաւ։
Սակայն այդ տրիբունները բաւական չեղան սէր եւ միութիւն
հաստատելու այլեւայլ կղզիներու բնակիչներուն մէջ, որոնք զանա-
զան ծագումներէ սերած, զանազան տեղերէ հաւաքուած եւ զանա-
զան պայմաններու մէջ ապրած, եւ մանաւանդ իրենց շահերուն մըր-
ջունով, ինչպէս նաեւ բնաւորութեանց եւ սովորութեանց տարբե-
րութեամբ՝ ոչ միայն անկարող եղան համերաշխութիւն մը դոյա-
րութեամբ՝ ոչ միայն անհամաձայնութեանց եւ զօտու-
ցնել մէջերնին, այլ նաեւ բուն անհամաձայնութեանց եւ զօտու-
թեանց առիթ տուին, որոնց իբր անհրաժեշտ դարման կը նկատուէր

տատել, լճակին աւելի հարաւային ծովափին վրայ, որ աւելի յարմար ու նպաստաւոր էր նաւարկութեան եւ առուտուրի: Արդէն Վենետիկցիները սկսեցին ժամանակէ մ'ի վեր վաճառականական առնչութիւններ հաստատել, ոչ միայն Իտալիոյ ծովեզերեայ քաղաքներուն եւ Արեւելքի հետ, այլ մինչեւ իսկ Ափրիկէի Սարակի-նոսներուն հետ, որոնց կը տանէին Իտալիոյ եւ Յունաստանի բերքերը եւ արտադրութիւնները:

Այս շրջանին, զօրանալով Լոնդոնարտացիները իրենց Աստուծոյ իշխանին պետութեան ներքեւ, եւ օգտուելով բիւզանդացիներու տը-կարութենէն՝ նորէն դրաւեցին Հռաւեննան, եւ դիմացին չգտնե-լով ո՛ր եւ է արդեւ կամ դիմադիր ուժ մը, սկսան իրենց վայրագ սապատակութիւնները եւ հասան մինչեւ Հռովմի դռները: Քահա-նայապետները — Գրիգոր Բ (715-731) եւ Գրիգոր Գ (731-741), — սարսափած անոնց արշաւանքէն, եւ անյոյս բիւզանդական կայս-րութենէն, իրենց աչքը դարձուցին դէպի Փրանկները, որոնց իշ-խանը Կարոլոս Մարթել (Ուոն), 732ին Սպանիայէն դէպի Գաղղիոյ սահմանները սապատակող Սարակիսները ջախջախեց եւ դուրս վտարեց էր իր երկրէն՝ Փուադիէի (Poitiers) դաշտերուն մէջ, Քրիս-տոնէութեան փրկիչ եւ ազատարար հռչակուելով: Սոյն պանծալի յաղթանակը ոգեւորեց անոր որդին՝ Պեպինոս Կարնախաակը, որ հօրը օրինակէն վառուած՝ շարք մը դեղեցիկ յաղթութիւններ տա-րաւ թշնամիներուն վրայ, որոնք ինկան տապալեցան անոր զէն-քերուն առջեւ, Ակուիտանացիք, Մաւրիտանացիք, Սաքսոններ, եւն: Ասով խրախուսուած Ստեփանոս Բ Քահանայապետը, սիրտ ըրաւ Նո-յեմբեր ամսուն՝ նոյն իսկ իր թշնամիներուն մէջէն անցնելով՝ կըտ-րել ձիւնապատ Ալպեանները եւ երթալ դռնել Պեպինոսը, զինքը թագաւոր օծել եւ անոր օգնութիւնը խնդրել:

Պեպինոս Իտալիա հասաւ 754 տարւոյն աշնան, յաղթեց Լոն-դոնարտացիներուն, հեռացուց զիրենք Հռովմի սահմաններէն, ստի-պեց որ Քահանայապետին յանձնեն Հռաւեննա քաղաքը իր շրջա-կաներով, եւ տարեկան տուրք մը պահանջելով անոնցմէ, իր հայ-րենիքը դարձաւ: Սակայն Լոնդոնարտացիները հանդարտ չկեցան. Աստուծոյ յաջորդը՝ Դէզիդերիոյ, հաղիւ դահ բարձրացած, գլուխ անցնելով իր վայրագ հրոսակներուն, արշաւեց դարձեալ Հռովմի վրայ, ուղեւոր տարածել իր տիրապետութիւնը բովանդակ Իտալիոյ վրայ, որուն դէմ միակ ուժը եւ խոչընդակն էր Հռովմի Քահանա-յապետը: Ադրիանոս Ա. իրեն նախորդներուն պէս, դիմեց Փրանկնե-րու թագաւորին, (այն ժամանակ Մեծն Կարոլոս) որ փութաց ահա-զին բանակով անցնիլ Ալպեանները, եւ մի անգամ ընդ միշտ ջնջել անհետացնել Իտալիայէն Լոնդոնարտական պետութիւնը, որ մնա-յուն վտանգ մ'էր Եւրոպայի խաղաղութեան: Եւ իրօք յաջողեցաւ ան իր այս յանդուգն եւ խիզախ ծրագրին մէջ: Փրանկ անհամար, քաջ եւ լաւ զինուած բանակները յարձակեցան, պաշարեցին, սու-


կալի ջարդ մը տուին Լոնդոնարտ գունդերուն, ուսկից ահագին ժը-խոր մը եւ իրարանցում մ'առաջ եկաւ, եւ մնացածները՝ կիսամեռ եւ վերաւոր խոյս տուին՝ ցրուեցան հոս հոն, որոնց թագաւորը հաղիւ կրցաւ մաղապուր պրծիլ իրեն քանի մը հաւատարիմներով՝ սպաստանիլ եւ ամրանալ Փաւիա քաղաքին մէջ, ուր հասաւ Մեծն Կարոլոս, պաշարեց Փաւիան, որ սովով եւ ժանտախտով ճարակ-ուած՝ անձնատուր եղաւ. թագաւորը դերի բռնուեցաւ եւ տարուե-ցաւ Գաղղիա, ուր Կորվէի մենաստանին մէջ մեռաւ: Եւ այսպէս վերջացաւ Լոնդոնարտացիներուն պետութիւնը Իտալիայէն, 206 տա-րի տիրապետութենէ վերջը (568-774):

Սոյն աղետալի դէպքերը, եւ մանաւանդ Փրանկ թագաւորներուն դիւցազնական արարքները, ամենամեծ տալաւորութիւն գործեցին Վենետիկի թէ՛ բնակիչներուն եւ թէ՛ վարիչ անձինքներուն վրայ: Ժողովուրդը երկու կուսակցութիւններու բաժնուած էր. մին՝ աւելի հակամէտ էր Արեւելքի եւ յոյն կայսրութեան, անցեալ աւանդու-թիւններու հաւատարիմ ու առեւտրական շահերու ձկտումով. իսկ միւսը՝ Արեւմուտքի մէջ եւ ցամաքի վրայ իր ընկերական եւ վաճա-ռականական առնչութիւնները դեռ աւելի զարգացնելու համար՝ հա-կամէտ էր Փրանկներուն: Ասկէ ծագեցան նոր դժտութիւններ, յու-ղումներ (ընդհարումներ, բախումներ) եւ սպանութիւններ տոժե-րու: Փրանկ կուսակցութեան կը պատկանէին Որելերիոյ տոժը (ըն-տըրուած 804ին), եւ Գրատոյի պատրիարքը եւ հաւանօրէն մեծ մաս մը իշխանաւորներուն եւ աւագանիին. իսկ հասարակ ժողովուրդը հակամէտ էր աւելի Բիւզանդիոնի: Մեծին Կարոլոսի յաղթանակ-ները եւ դիւցազնական արարքները, ինչպէս նաեւ անոր իբր հռով-մէական կայսր հանդիսաւոր օծումը եւ թագադրութիւնը Քահանա-յապետէն՝ հմայեց ու խանդավառեց Վենետիկ լճակին բնակիչները, այնպէս որ տոժը անձամբ դնաց շնորհաւորելու եւ իր պետութեան յարգանքը ընծայելու անոր: Յունական կուսակցութիւնը սակայն, ստիպուած առ ժամ լռելու եւ հանդարտիկ մնալու, զաղտնապէս կը հասցնէր իր ձայնը եւ բողոքը մինչեւ բիւզանդական արքունի-քը, ամբաստանելով Գաղղիան իբր հեղինակ այս բոլոր յուղումնե-րուն: Ասոր վրայ Նիկեիոս, այն ժամանակի Բիւզանդիոնի կայսրը, ահագին նաւատորմի մը ղրկեց Ադրիականի մէջ, որով սիրտ ա-ռած յունական կուսակցութիւնը, ըմբոստացաւ եւ ընդվզեց նոյն իսկ կառավարութեան դէմ: Սակայն երբ բիւզանդական նաւատոր-միդին սպալապետը, յետ ընդունայն ճիգեր եւ ցոյցեր ընելու, ետ կանչեց իր ծովային զօրութիւնը, այն ժամանակ Փրանկ կուսակ-ցութիւնը՝ իր Որելերիոյ տոժին հետ՝ դիմեց Մեծին Կարոլոսի որդե-ւոյն Պեպինոսի, որ փոխանակ իրեն հօրը՝ Իտալիոյ թագաւոր օծ-ուեր էր, հասաւ ջախջախելու յոյն կուսակցութիւնը եւ անոր հետ չքացնելու ժողովրդեան ռամկավար ձկտումները, եւ ամբացնելու տոժին դիրքը, զայն բացարձակ տէր եւ իշխան ճանչնալով բոլոր

կումը եւ վենետիկեան արուեստին ծագումը. ոսկեղօծ դմբէթները՝
կը պատկերացնեն մարդու մտքին մէջ՝ մերթ վեհաշուք Ս. Սո-
փիան, եւ մերթ թուրք մզկիթները (մինարէները), եւ այն ճար-
տարապետական արուեստին կախարդիչ երեւոյթներուն եւ տեղւոյն
սրբութեան մէջ՝ կը դտնենք մեր շուրջը կենդանի պատկերը ժողո-
վուրդի մը, որ մեծցած ու զօրացած առուտուրով եւ աշխարհակա-
լութիւններով, աշխարհիս բոլոր երկիրներէն կը բերէր մարմարներ,
պղինձ, սիւն կամ արձան, անոնցմով գեղեցկացնելու տաճարը իր
Ս. Մարկոսին, ու խօսուին յուշարձան մ'ընելու զայն իր գործօն,
եռուզեռ կեանքին, իր մեծագործ ձեռնարկներուն, եւ քաղաքակըր-
թութեան մէջ իր ունեցած փայլուն դերին:

(Շարունակելի)

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ



ՓՈՔՐԻԿ ԱՄՊԸ

Անհուն երկնի անապատին մէջ կապոյտ
կարաւանի պէս մոլորած կը շրջիս,
Ու չես կրնար դառնալ անձրեւ կամ կարկուտ
Արծաթ թելով շղթայուելու աշխարհիս:

Կ'երթաս այսպէս ուր որ տանի քեզ քամին
Բախտի նաւակն ինչպէս՝ ծրփուն ծովէ ծով.
Հորիզոններն այնքան հեռու կը թլուին
Որ կը հիւծիս միշտ նոր երկինք փնտռելով:

Ձի կրնար քեզ կապոյտն արծուի թեւեր տալ
Եւ ոչ արփին իր շողերով օրօրան.
Ո՛րվ հէզ ամպիկ, պէտք չէ բախտին հաւատալ

Որ կը տանի ցընորքներով կորըստեան:
Երանի՛ թէ դուն յորդ անձրեւ ըլլայիր,
Թերեւս դօտի մը ծիրանի դառնայիր:

Քենիա, 30 - ժԱ - 1943

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԽՕՍԻ ԱՌՎԵՆԵՏԿՈՅ ԾՈՎԸ

Պիտ՝ տենչայի նետուիլ դարձեալ
Կոհակներուդ գըրոհին դէմ,
Կռուի՛լ քեզ հետ ու չընկրկի՛լ
Ահարեկող քու մոլուցքէն:

Մարմինս յանձնած քու ջուրերուն
Մոլեղնոտած պոռչըտութիւն՝
Ապրի՛լ իմ մէջ գեհենի պէս
Ինքզինք տանջող անհաշտ աշխարհն:

Իմ ծաղկատի կեանքէս ի վեր
Սիրած եմ քու պարարտ ջուրերդ,
Քու մըռունչներդ, որոնց թովքէն

Հողիս հարբեալ՝ երգած է քեզ,
Ծանր ու խորունկ քու շարժումներն,
Ամպոտ եւ կոյր երկնի մը տակ:

ԼԻՏՈՅԻ ԱՓԵՐՈՒՆ

Կ'աղմըկէ դարձեալ այսօր իր ոըջէն
Փոթորիկ. ժայռերն, ամպերն ու երկինքն
Մառախուղի մէջ. լըռութիւն մ'անծայր
Կը պատէ քաղաքն ափունքներն ու ծով:

Աւաղն՝ հարուածեալ հովէն ու բուքէն՝
Կը փախչի խաւ խաւ. մայթերուն վըրայ
Անմարդ մենութիւն. իմ շուրջ լոկ աշնան
Տերեւներուն խօլ արշաւն անպախտուրց:

Սիրտն իմ մեկուսի, կ'ըմբռնէ այս խոր
Կախարդանքն օրուան. ճակտիս դէմ կը զգամ
Գիշերն որ տակաւ կը հըպէ թեւն իր:

Իմ կեանքս ու իմ բախտս նըման են այս մեծ
Ծովուն տոչորման. խընդրեմ, մի՛ յուզէք
Յաւի մէջ անշարժ անոնց ալիքներն:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Վենետիկ, 25 - 10 - 1945